բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***Դատական ծախսերի հետ կապված պահանջները ներկայացվում են*** *բացառապես տվյալ գործի շրջանակներում՝* ***գրավոր միջնորդության տեսքով****: Նման պահանջից հրաժարվելու կամ* ***այդ կարգը չպահպանելու դեպքում դատական ծախսերի հատուցման հարցը համարվում է լուծված****:*

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայցվորը հայցադիմում ներկայացնելիս նախապես վճարել է օրենքով սահմանված չափով պետական տուրքի գումարները և հայցը բավարարվում է, ինչպես նաև հիմք ընդունելով այն, որ Հայցվորի կողմից պետական տուրքի մասով **գրավոր միջնորդություն է ներկայացվել Դատարան, հետևաբար՝** Դատարանը գտնում է, որ Պատասխանողից հօգուտ Հայցվորի պետք է բռնագանձել 30 000.00 ՀՀ դրամ՝ որպես վճարված պետական տուրքի գումար:

Դատարանը, նկատի ունենալով նաև, որ սույն քաղաքացիական գործի քննության հետ կապված այլ ծախսեր չեն առաջացել, գտնում է, որ դատական ծախսերի հարցը՝ մնացած մասով, պետք է համարել լուծված:

4. <u>Վճռի օրինական ուժի մեջ մտնելը</u>.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***պատվիրատուի*** *և գնահատող հանձնաժողովի* ***գործողությունների*** *(անգործության) և* ***որոշումների*** *բողոքարկման հետ կապված վեճերով դատարանի եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:*

Տվյալ դեպքում Հայցվորի կողմից ներկայացվել է պատվիրատուի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված հայց, հետևաբար, Դատարանի եզրափակիչ դատական ակտը՝ վճիռն, ուժի մեջ պետք է մտնի հրապարակման պահից:

IV

(ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ)

Առաջնորդվելով վերոգրյալ պատճառաբանությամբ և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2 գլխով, 198 և 360-362 հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. <<Ագաստ>> ՍՊԸ-ի ընդդեմ <<Մեղրու տարածաշրջանային բժշկական

կենտրոն>> ՓԲԸ-ի՝ <<Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի կողմից վերջինիս և <<Ագաստ>> ՍՊԸ-ի միջև 10.01.2024 թվականին կնքված թիվ <<ՄՏԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/2>> ծածկագրով պայմանագրի թիվ 165 ծանուցումը՝ պայմանագրի միակողմանի մասնակի լուծման մասին, անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցը բավարարել ամբողջությամբ.

1.1. անվավեր ճանաչել <<Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի տնօրենի 17.07.2024 թվականի <<Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին>> թիվ 165 ծանուցմամբ <<Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի և <<Ագաստ>> ՍՊԸ-ի միջև 10.01.2024 թվականին կնքված թիվ <<ՄՏԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/2-3>> ծածկագրով պայմանագիրը միակողմանի մասնակի լուծումը:

2. <<Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ից հօգուտ <<Ագաստ>> ՍՊԸ-ի բռնագանձել 30 000.00 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Դատական ծախսերի հարցը՝ մնացած մասով համարել լուծված:

4. Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

5. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

6. Վճիռը կարող է բողոքարկվել միայն վերաքննության կարգով՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Արման Օհանյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am